

արժեք 920-12-1



ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ


◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳՍԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր ԷԼՏԵՐԵՆԻ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 12

8 ՄԱՅԻՍ 1920

Հայ եղեռնին մատուցած զոհերէն, մեծ
մարտիրոսներէն



ԳՍԼԵԳԻՆ ԿՕԶԻԿԵԱՆ



ԳՍԼԵԳԻՆ ՕԶԱՆԵԱՆ

ԳԻՆ 100 ՓՐ.

ԾՆՈՂՔ ՄԻ ՔԱՇԵԼ ՏԱՐ

Ծնողքնե՛ր պէտք չէ քաշել տար
ձեր փոքրիկներուն ակռաները, այդ կեր-
պով կզակի ձեւափոխութիւն յառաջ
կուգայ, Դիմեցէք Ատամնաբոյժ

ՏՈՒԹ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ

որ արտասահմանի մէջ երկար ժամա-
նակ, մասնաւորապէս զբաղած է նաեւ
տղոց կաթի ակռաներու դարմանումի
ուսումնասիրութեամբ եւ ատով մասնա-
գիտութիւն ձեռք բերած:

Հասցէ՝ Պոլիս, Էմին Էօնիւ, Եէնի ձամիի
սանդուխներուն դէմ. Թիւ 61:

ՆՈՐ ՀԱԴՈՒՍ. — Պզտիկնե՛ր, 250
դրուշով նոր եւ ճաշակաւոր ամառնա-
յին հագուստ ունենալու համար ծնողք-
նիդ առաջնորդեցէ՛ք Զարմաքճըլար,
Մեծ Նոր խան, Բ. յարկը, Կ. Յ. Թուխ-
տարեան ընկերութեան վաճառատունը:

Տղոց հագուստի վաճառատուն

ՄԻԶՐԱՆ ՄՈՄՃԵԱՆ

Եւրոպական ձեւով ճաշակաւոր, դիմաց-
կուն եւ աժան հագուստ ունենալու հա-
մար տղա՛ս, ծնողքդ առաջնորդէ Մեծ
Շուկայ, Իսկէնտէր Պօղազըի դրան ուղ-
ղութեան վրայ, Ֆէրաճէճիլէր փողոց,
Թիւ 1:

Փ Ա Ս Տ Ա Ր Ա Ն

ՃԷՔԷՐԵԱՆ

Զարմաքճըլար, Սեպուհեան խան, Թ. 40

ՏՔԹ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պայագիտ, Մաքասճըլար, Թիւ 5

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

ՏՔԹ. ԵԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՆ

ՏՔԹ. Կ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պոլիս, նոր նամակատան կից Նիւզհէթ
Զիա զեղարանին վերնայարկը:

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ԵՒ

ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆՑ

ՎԱՃԱՌՍՏՈՒՆ

ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ

Մեծ ՇՈՒԿԱՅ ՔԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ
ՃԱՏՏԷՆ ՔԻՒՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ
ՃԻՇՏ ԴԻՄԱՅ ԹԻՒ 2

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան

նախանձախնդիր անձերուն

ՏՔԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԷԻՍԵԱՆ

ԱՏՆՄՆԱԲՈՅԺ

Ի դիւրութիւն իր յարգոյ յաճախորդնե-
րուն եւ համակիրներուն փոխադրուած է
Պոլիս, Նոր նամակատան դէմ, Վլօրա
խան, Թիւ 18, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբաճաշակ ատամնաշարեր. գուրօններ,
պոլիճներ եւ բիւժօններ:

ԿԱՏԱՐԵԱԼ ՃՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՔԹ. ՏԻԳՐ. ԵՂԻԿԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Օրխան պէյ խան
Թիւ 22:

Գիտական խնամք եւ զեղարուեստական
ամենանուրբ ճաշակ, կատարեալ ճշդա-
պահութիւն եւ մաքրութիւն:

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրոն Պահնէ Գաբու: Մէյվախօճ Խան—Հեռաձայն Սթամպուլ 319

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԹԵՐԼԵՄԵՋԵԱՆ • ՔԻՒՐՔՃԵԱՆ

ՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԹԻՒ

Փոքրիկ բարեկամս,

Այսօր ձեզի պիտի խօսիմ հինգ քոյր-գեղարուեստներէն մէկուն, Նկարչութեան մասին: Բայց նախ ձեզմէ դեռ չգիտցողներուն համար թուեմ անունները այդ հինգ քոյր-գեղարուեստներուն, որոնք են Բանաստեղծութիւն, Երաժշտութիւն, Քանդակագործութիւն և Ճարտարապետութիւն: Յուսամ ուրիշ անգամ առիթներ պիտի ունենամ ձեզ խօսելու միւս գեղարուեստներուն մասին, բայց այս անգամ բացատրեմ Նկարչութիւնը:

Բայց կարծեմ նախ հասկնալ պիտի ուզէիք թէ ի՞նչ է Գեղարուեստը: Արդէն այս մասին բաւոր ինքզինք կը բացատրէ: Գեղարուեստ կը նշանակէ գեղեցիկ արուեստ: Դուք արդէն դպրոցին մէջ սորված ըլլալու էք արուեստ ու արհեստ բառերուն տարբերութիւնը: Արուեստով մտաւոր ու ձեռական աւելի բարձր ու գեղեցիկ արտադրութիւններ յառաջ կը բերուի, իսկ արհեստով աւելի պարզ ու օգտակար բաներ: Գեղեցիկ նկար մը արուեստի, իսկ ձեւաւոր ու դիմացկուն կօշիկ մը արհեստի արտադրութիւններ են: Իսկ գալով գեղարուեստին՝ այդ գեղեցիկ բաներ արտադրելու արուեստն է: Վսեմ քերթուած մը, հոգեզմայլ եղանակ մը, հիանալի նկար մը, նրբարուեստ անդրի մը և գեղապառօյց մայր-եկեղեցի մը գեղարուեստական արտադրութիւններ են:

Խօսքս մասնաւորելով Նկարչութեան վրայ, կրնամ ըսել թէ ան հինգ քոյր-գեղարուեստներուն գեղեցկագոյններէն մէկն է: Նկարիչը իր առջեւ ունի Բնութիւնը և մարդկային հոգին, երկու անհունութիւններ, որոնց որչափ խորը թափանցէ, այնչափ դէպի կատարելութիւն կը սալառնի. որչափ ուսումնասիրէ զանոնք, այնչափ թռիչ կ'առնէ իր արուեստը: Արհեստները հունաւոր են, իսկ արուեստները՝ մանաւանդ գեղարուեստները՝ անհուն, ու հետեւաբար անոնց մէջ յաջողութիւնն ալ անհուն է: Ո՛չ չափ ունի, ո՛չ սահման: Բնականաբար հոս ես մասնագէտի մը ձեռնհասութեամբ ու նրբադատութեամբ չեմ կրնար բացատրել ձեզ Նկարչութիւնը, ու դուք ալ արդէն չունիք այդպիսի բացատրութիւններ պէտք եղածին պէս ըմբռնելու կարողութիւնը: Բայց այս առթիւ պիտի փորձեմ քանի մը տողերով նկարագրել ձեզ թէրլէմէղեան Քիւրքձեան Նկարներու Յուլիանոսէսը, որ բացուած է Բերա, Պօնտոսի զէմ, Հայ Ակումբի սրահին մէջ: Եւ այս առթիւ պիտի յանձնարա-

բեմ ձեզ որ, իմ սիրելի դեռատի ընթերցողներս, եթէ մինչեւ հիմա չէք լսած՝ սորվեցէք թէ մեր Հայ ցեղը շատ հին օրերէ ի վեր գաղափարապաշտ ու գեղարուեստասէր ցեղ մը եղած է։ Աւելորդ կը նկատեմ այս մասին մեր ցեղին պատմութենէն օրինակներ յիշել։ Այո՛, մինչեւ անգամ կրնամ ըսել թէ մեր ցեղին գաղափարապաշտութիւնը և գեղարուեստի ճաշակն ու ընդունակութիւնը համեմատելով մեր թիւին ու միջավայրին, շատ իսկ է։ Բայց այս գովելի յատկութիւն մըն է ցեղին համար և փաստ մը թէ ամէնէն աննպաստ ու ջլատիչ պայմաններու մէջ իսկ ցեղին մէջ կայ հոգի մը, ներշնչում մը, բոց մը, որ վսեմ է, որ գաղափարական է, որ հիանալի է։ Հոն այդ նկարներու Յուցահանդէսին մէջ պիտի տեսնէք թէ այս այնչափ հալածուած, տառապած ու կոխոտուած ցեղին երկու զաւակները գեղարուեստի ի՛նչ բարձրութեան սլացած են, ի՛նչ յաջողութեան հասած են։ Հոն ցուցադրուած 150ի չափ նկարներուն մէջ ի՛նչ գեղեցիկ արտադրութիւններ կան, որոնք պատիւ պիտի բերէին որ և է ցեղէ արուեստագէտի մը։ Իսկ որչափ աւելի պատուաբեր են մերինին պէս աննպաստ ու ջլատիչ միջավայրի մը մէջ ապրող ցեղի մը այդ երկու զաւակներուն։ Արդէն շատ երկար պիտի ըլլար նկարներուն անունը միայն յիշել հոս. բայց մասնաւորապէս «Սեւան» նկարը, հիասքանչ արտադրութիւն մըն է, որ մեր հոգիները կը վերացնէ դէպի հայրենի գեղեցկութիւններ։ Իսկ «Արեւին առաջին համբոյրը Արարատին» երկիւղած պատկառանքով մը կը համակէ մեր հոգին։ Անդին ցեղին մէկ ուրիշ գեղարուեստագէտ զաւակը, Կոմիտաս Վարդապետ, նստած է վիթխարի ծառի մը բունին կրթնած, գործի մը վրայ, այնչափ քնական, այն խորասուզուած իր ներշնչումներու խորը, որ քեզ ալ կը վերացնէ։

Բայց չըսի՞ արդէն թէ կարելի չէ ինծի համար այդ գեղեցիկ նկարներուն թուումն իսկ ընել։ Դացէք տեսնել զանոնք ու դուք ալ ինծի պէս գոչեցէ՛ք. «Պատի՛ւ այն հալածուած Յեղին, որ ձեզի պէս արուեստագէտ զաւակներ ծնած է։»

ՄԱՅԻՍԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Հի՛ւր մը արդեօք, է՛, ո՞վ է ան,
Որ կուգայ ինձ այցելութեան։
Եկող աղջնակն է Մելիկե,
Որ ամենուս սիրելին է։
Դե՛հ, աղջրնա՛կ դու սիրական,
Այդ կողովիդ մէջ ինչե՛ր կան.
Տեսայ, տեսայ հիանալի
Ինչ ծաղիկներ են Մայիսի։

Գիտե՛մ զանոնք ուրկէ գար՝
Փունջ շինելու ձեռնովդ հարսար։
Խնձորենին հիւղերուն վրայ
Նուրբ կոկոններն այդ կը բանայ,

(Հեռեւողարար)

Ըսէ՛, խնդրեմ, խօսե՛ շիտակ,
Խոսերու զով շուքերուն ցակ
Չե՛ր քաղցրաբոյր եւ անուշակ
Փափկիկ ծաղիկն այդ մանուշակ։

Կարծեմ մէջ ձեր բուրասանին
Ամոռուկներն այդ կը բուսնին։
Արդեօք վայրի սա՛ ծաղիկներ
Դաշերուն մէջ չե՛ն բացուեր։
Այո՛, սիրուն են Մայիսեան
Ծաղիկները այդ բազմազան,
Բայց ասոնցմէ ա՛լ աւելի
Բարի տղամ էն սիրելի։

ԳՐ. Հ. Գ.

ԵՂՈՒԱՐԴԻՆ ԵՐԱԶԸ



Ամառ իրիկուն մը, Եղուարդ իրենց պարտեզին մէջ կը պտրտէր, ծառուղիներուն երկայնքն ի վեր վազելէ վերջ, մեծ աւազանին մօտեցաւ, ուր լողացող կարմիր ձուկեր կը տեսնուէին և սկսաւ զուարճանալ հոն խճաքարեր նետելով, որոնք ջուրին երեսը շրջանակներ կը ձեւացնէին:

Գրեթէ գիշեր էր և երկինքը աստղեր կը փայլէին և աւազանին մէջ իրենց լոյսը կը ցոլացնէին: Քանի Եղուարդ հոն խճաքարեր կը նետէր, այնքան աստղերը կը թուէին պարել շարժուն ջուրին մէջ:

Եւ ահա լուսինն ալ հորիզոնէն բարձրանալով ան ալ աւազանին մէջ ցոլանալ սկսաւ: Եղուարդ, որ միշտ լուսինը ունենալ փափաքած էր, մտածեց թէ դիւրաւ պիտի կրնար ջուրին մէջէն լուսինը բռնել: Աւազանին բարձր եզերքին վրայ կեցաւ, ձեռքերը դէպի առաջ, կատուի մը պէս, որ մուկ մը կը դարանէ, և երբ փոքրիկ ալիքներուն միջոցաւ լուսինը թուեցաւ իր շատ մօտիկը գալ, Եղուարդ իր երկու թաթիկները ջուրին մէջ մխրձեց և միայն... պարապր բռնեց:

Դժկամակ բացագանչութիւն մը արձակեց, բայց չի վհապեցաւ և կրկին զայն բռնել ջանաց: Լուսինը ջուրին ալեակներէն տարուած, աւազանին ճիշդ մէջտեղը աստղերուն հետ կը խաղար:

Եղուարդ սկսաւ բարկութենէն լալ, և յետոյ ոտքերը գետին զար-

նել: Երբ մայրը, որ տղուն ազաղակները լսած էր, իրեն մօտեցաւ, Եղուարդ սկսաւ բարկութեամբ պոռալ կանչել. «Լուսինը կ'ուզեմ, լուսինը»:

Մայրը ուղեց զայն մխիթարել և հասկցնել թէ իր այդ փափաքը իրականացնել անկարելի էր: Եղուարդ ոչինչ ուղեց ըսել և այնքան սպառնացաւ, որ մայրը առանց զինքը համբուրելու հրամայեց որ երթայ պառկի:

Եղուարդ երկար ատեն լացաւ, յետոյ քնացաւ և ահա թէ ինչ երազեց.

Ինք մինակ էր, միտ մինակ ընդարձակ և ամայի երկրի մը մէջ. կը քալէր, միշտ կը քալէր և միշտ լուսինը կը տեսնէր:

Յանկարծ լուսինը՝ որուն տրեգոյն փայլը իր գնացքը կը լուսաւորէր, դէմքի մը երեւոյթը առաւ, ձերմակ և քաղցր դէմքի մը, ճիշդ իր մայրիկին դէմքին պէս, որ իրեն նայել կը թուէր:

Լուսինը յետոյ այնքան երկընցաւ, այնքան որ վերջապէս հողին դպաւ, ուրկէ վերջ չափազանց պզտիկցաւ. Եղուարդ տեսաւ որ ան երկու փոքրիկ սրունքներ ունէր, որոնցմով սկսաւ վազել:

Տեսաւ նաեւ անոր երկու պըղտիկ բազուկները, երկու փոքրիկ ձեռքերը, որոնք զինքը կը կանչէին: Եղուարդ սկսաւ վազել անոր միանալու, բայց քանի ինք կը վազէր, լուսինն ալ այնքան կը վազէր: Այն ատեն սկսաւ ոտքերը գետին զաւրնել և պոռալ ճիշդ այնպէս, ինչպէս ըրած էր առջի օր աւազանին մօտ «Լուսինը կ'ուզեմ, լուսինը» ըսելով:

Այդ միջոցին լուսինը հետըզ-
հետէ վեր, վեր ելաւ և վերստին
երկինք բարձրացաւ, ուր Եղուար-
դին մօրը դէմքին նման դէմք մը
առաւ, նոյն տխուր և տեղոյն
արտայայտութեամբ, ինչ որ պըզ-
տիկ տղան նշմարած էր, երբ նա
առանց զինքը համբուրելու պառ-
կելու կը դրկէր:

Այս տխուր տպաւորութեամբ
Եղուարդ արթնցաւ քիչ մը ջղայ-
նացած, մայրը իր վրայ ծռած
գտաւ, որ զինքը գորովանօք
գրկեց: Տղան անմիջապէս հար-
ցուց անոր ճիշդ իր գաղափարովը
սեւեռուն. «Մայրի՛կ, արդեօք
այսօր պիտի կարենամ աւազանին
մէջի լուսինը բռնել:»

Մայրը առանց պատասխան
տալու իր թեւերուն մէջ առաւ
զայն, և հիւրանոցի խոշոր հայե-
լիին առջեւ տարաւ և ըսաւ.

— Ի՞նչ կը տեսնես:

— Զիս, պատասխանեց Եղ-
ուարդ:

— Աղէ՛կ, ջանա՛ ինքզինքդ
բռնել:

Եղուարդ նոյնիսկ ձեռքը եր-
կարել չփորձեց, ամօթխած գլու-
խը ծռեց, և հիմայ միայն հաս-
կցաւ անցածը, որովհետեւ Եղ-
ուարդ հակառակ 4 տարու ըլճա-
լուն, շատ ուշիմ տղայ մըն էր:

— Զաւակս, ըսաւ քաղցրօրէն
մայրը, կը հասկնաս թէ ինչու չես
կրնար լուսինը բռնել, հակառակ
որ քեզ այնքան մօտիկ կ'երեւայ
աւազանին մէջ, պատճառը այն
է որ ջուրին մէջ անոր պատկերն
է որ միայն կը տեսնես և աւա-

զանին ջուրը պարզապէս հայելիի
մը կը նմանի:

Այս բանը պէտք է քեզ սոր-
վեցնէ թէ իմաստուն և ողջամիտ
տղայ մը պէտք չէ ունենայ ո՛չ
ցանկութիւն, ո՛չ ալ գործադրելը
անկարելի ըղձաւքներ:

Սկիւսար

Թրգմ. ՇԱ.-ՔԼ:

ԱՊԱԳԱՅ ԶԻՆՈՒՈՐԸ

Թ. Վրոյր Յովնանեանին

Կապուտաչուի, մանրիկ փթով,
Դեղձան մագով պուպրիկ մ'ե ան.
Նայուածքն անուշ, լեզուն թոթով,
«Հայր Մեր»ին կեսն գիտէ բերան:

Քանի մը օր զընաց դրպրոց,
Շուտով կըծկեց՝ սակայն՝ հեռու՝
Զի հաւնեցաւ գիրք ու գրգրոց,
Զի այսօր է ան... հինգ տարու.

Լեզուն երբեք չի խօսեցաւ
Սուտ մը կամ խօսք մը անպիտան,
Բայց ունենայ երբ վերք կամ ցաւ,
Պեպեքի պէս կ'ուզէ տան, տան:

Պատուհանը կը վազէ յար,
Շոգեկառփին ձայնն երբ լքէ,
«Երբոր մեծնամ՝ պիտի ես, հա՛յր,
Թրուենի մը ըլլամ» կ'ըսէ:

Ծովն քրած է իրեն մատեան,
Երբոր տեսնէ նաւակ կամ նաւ,
Սարեն, ձորեն կը նառէ ան,
Նաւավար մը կ'ըլլայ իրաւ:

Ազգասէր է, քաթիկներով
Ծափ կը զարնէ ան հրեուազին՝
Երբոր լքէ մեր հոգեթով
Հայաստանին անունն անգին:

Կը պատրաստուի ըլլալ զինուոր՝
Հայաստանի քաջ բանակին,
Ծառայելու աղուոր, աղուոր
Մեր եռագոյն դրօշակին:

ՎՐՈՅՐԻ ՀԱՅՐԻԿԸ

Ա.

Ա. Ր Մ Ա Տ

Սիրելի փոքրիկներ՝

Կը խորհիմ թէ զարնան այս գեղեցիկ եղանակին շատ յարմար պիտի ըլլայ որ ձեզի համառօտ տեղեկութիւն մը տամ բոյսերու մասին։ Արդէն պարտէզներու, բաց դաշտերու և մինչեւ իսկ ձեր տուններուն մօտիկ բուրաստաններու մէջ շրջապատուած էք ծառերով ու ծաղիկներով, մեծ ու պզտիկ բոյսերով։ Մայր Բնութիւնը զարդարող այս դալար պատմութեանը ուրիշ բան մը չէ, եթէ ոչ բոյսն ու բուսականութիւնը։ Բայց բնական կարգը պահելու և ձեզ հասկնալի ըլլալու համար այս անգամ պիտի խօսիմ ԱՐՄԱՏին վրայ։

Արմատին կազմութիւնը.— Գիտէք թէ ի՞նչ է բոյսի մը և կենդանիի մը տարբերութիւնը։ Բոյսը կենդանիի մը պէս չկրնար շարժիլ և գգալ, կը մնայ ու կ'աճի միեւնոյն տեղը։ Բայց ի՞նչ բան է որ բոյսը իր եղած տեղը կը պահէ. իր արմատը, չէ՞։

Արմատն է որ դէպի վար հողին մէջ կ'երկննայ, հոն կը հաստատուի, այնպէս որ հովը չի կրնար տապալել բոյսը։

Բոյսերէն ոմանք, ինչպէս ճակնդեղի տունկը, խոշոր աւ միակ արմատ մը ունի որ դէպի հողը կ'երկարի։ Ծակնդեղը գետնէն շատ քարձր բոյս մը չէ, ցօղուն չունի ու անոր ունեցած քանի մը տերեւները արմատին ուղղակի վրայէն կ'աճին։ Սակայն այս մէկ հատիկ

արմատն իսկ իր վրայ ունի բազմաթիւ մագանման արմատիկներ, որոնք հողին մէջ կը տարածուին ամէն կողմ։

Բայց խոշոր բոյսերէն շատեր, ինչպէս ծառեր, և մինչեւ իսկ փոքրիկ բոյսեր, ինչպէս խոտազգիներ, ճիւղաւորուած արմատներ ունին։ Այսինքն գլխաւոր արմատը շատ մը արմատիկներու կը ստորաբաժանուի, նման ցօղունին կամ բունին որ հողէն վեր ճիւղերու կը բաժնուի։



ԱՐՄԱՏ

Նայէ հոս ներկայացուած ցօղունին և անոր տակի արմատին։ Ան թռչունի մը ոտքին չի նմանիր, որ կարծես մագիլներ ունի զայն կեցած տեղը հաստատ պահելու համար։ Հաղիւ սա տարբերութիւնը կայ թէ թռչունը քանի մը մագիլներ կրնայ ունենալ, մինչդեռ բոյսը անհաշուելի ըլլալու չափ շատ։

Կը տեսնենք թէ բոյսը կամ տունկը ինչպէս հաստատ կը կառչի հողին իր այս մագիլներով, ա՛լ աւելի հաստատ երբ այդ մագիլները խուրձի մը նման կը մանեն հողին մէջ։ Երբ հովի փոթորիկ մը գայ, վստահ կրնանք ըլլալ թէ բոյսը դիւրաւ չալիտի տապալի։

Ահա արմատին պաշտօններէն մէկը այս է. այսինքն բոյսը իր եղած տեղը հաստատուն պահել։

Արմատը միշտ սննդառութեան.— Բայց այդ չէ արմատին միակ պաշտօնը։ Ասկէ աւելի կարեւոր ու կենսական պաշտօն մըն ալ ու-

նի : Բոյսը իր մասը հանունդին մէկ մեծ հողէն կը ստանայ : Հետեւաբար առանց արմատին օգնութեան ի՞նչպէս պիտի կարենար ստանալ իր սնունդը : Արմատները հողին մէջ են ու ջուրը կը ծծեն հոնկէ : Ահա այդ ջուրին մէջ են այդ միւս սնունդները , որոնց պէտք ունի բոյսը :

Արմատներու գործունէութեան մասին շատ զարմանալի կէտ մը կայ : Կարծես անոնք գիտեն թէ բոյսը ի՞նչ բաներու պէտք ունի : Որ և է տեսակ բոյսի մը արմատը հողէն կը ծծէ ճիշդ այն սնունդը , որ այդ տեսակ բոյսին համար կարեւոր է : Ուրիշ տեսակ բոյսի մը արմատն ալ այդ բոյսին պէտք եղած սնունդը կը ծծէ հողէն :

Ուրեմն , կը տեսնենք թէ բոլոր բոյսերու արմատները գիտնալ կը թուին ճիշդ այն բաները , զորոնք պիտի առնեն հողէն , բացի ջուրէն : Եւ եթէ բոյս մը անկուի այն տեսակ հողի մը մէջ , որ իրեն պէտք եղած սնունդը չի պարունակեր , ի՞նչ պիտի ընեն արմատները : Անոնք յարմար սնունդը չեն գտներ և բոյսը կը հիւանդանայ ու կը մեռնի :

Արմատին նիւղաւորումը.—Սակայն արմատները ի՞նչպէս կը մըտնեն հողին խորը , ու կ'աճին մանր ու խոշոր քարերու և ժայռերու շուրջն ու վերելը : Ահա այս կերպով , բոլոր ժամանակ երբ արմատիկներու ծայրերը սնունդ կը ծծեն բոյսին համար , իրենք ալ կ'աճին իրենց ծայրերէն : Եւ որովհետեւ նորարոյս արմատիկները աւելի նուրբ են՝ անոնք աւելի դիւրաւ կը գտնեն իրենց ճամբան ,

որովհետեւ հանդարտ պառկելէ զատ գործ մը չունին անոնք , միայն թէ աւելի կ'երկննան , դանդաղաբար բայց շարունակ , միշտ աճելով ծայրերէն : Ահա այս կերպով արմատածայրերը կ'երթան ուր որ կրնան :

Յորդոր.— Այս անգամ խօսեցայ ձեզ արմատներու մասին . յաջորդով պիտի խօսիմ տերեւներու մասին : Բայց նոյն ատեն պիտի փափաքէի որ դուք ալ չբաւականանաք ձեր այս կարգացածով , այլ երբ պարտէզ կամ դաշտը ելլէք , արմատախիլ քաշէք բոյս մը և այս ըստածները բաղդատէք բոյսերու վրայ : Ահա ա՛յն ատեն է որ ձեր կարգացածները աւելի գործնականօրէն պիտի տպաւորուին ձեր միտքերուն վրայ : Այս կերպով աւելի հաճոյք պիտի գտաք Բնութիւնը ուսումնասիրելէ ու պիտի ընդարձակէք ձեր ծանօթութեան սահմանները ու ճոխացնէք ձեր գիտութեան պաշարը :

Ամփոփեց

ԳՐ. Հ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

«Առաւօտ» նորահասներու հանդէս կը նուիրեն՝ Արնաւուտ գիւղի Բարոյացուցիչ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները Արնաւուտ գիւղի Հայանուէր որբանոցին երկու օրինակ , Տեարք Յովակիմ Յակոբեան (Վանեցի) Կէտիկ Փաշայի որբանոցին երկու օրինակ , Զարեհ Սարբեան Նարլը Գաբուի որբանոցին մէկ օրինակ , Արթաքի Արզումանեան Պէշիկթաշի որբանոցին մէկ օրինակ , Համբարձում Պարոնեան Արնաւուտ գիւղի Հայանուէր որբանոցին մէկ օրինակ :

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԸ

Օր մը երբ Նրւարդ
Կը խաղար զըւարթ՝
Գաղափար մը նոր
Միտքն եկաւ անոր.
Ինչպէս որ իր մայր
Իր մանկիկ եղբայր
Կը լուար մահուր՝
Թափելով գաղջ ջուր,
Փափափեցաւ որ
Լոգանով մ'աղուոր՝
Ինք ալ իր պուպրիկ
Լուայ մահուրիկ:
Գրնաց իր սենեակ,
Ու հոն միս մինակ՝
Փոքրիկ տաշ մ'առաւ,
Ու մեջք շաւ լաւ
Լոգցուց իր պուպրիկ
Մայրիկն այս փոքրիկ:
Բայց, տես որ, աւանդ,
Այս հանելի խաղ՝
Ուրախ Նրւարդին
Մանկական սիրտին
Պատահուեց մեծ ցաւ,
Ու նստաւ, լացաւ:
Պուպրիկն իր սիրուն,
Մեղք խընամբներուն,
Քրքրուեցաւ շուշ,
Քուրջի մը պէս փուշ:
Մազերն ոսկեգոյն
Վար ինկան իսկոյն,
Վարդերն ալ դեմքին
Թարաւամած էին.
Աչերը փայլուն
Մարեցան սրմոյն.
Մոմլաթէ փորին
Մէկ նեղքէն խորին՝
Յարդեր, բուրջեր հին
Դուրս կը թափէին:
Վախ, հեք պուպրիկին

Ելած էր... հոգին:
Լալով զընաց մօր՝
Ու պատմեց անոր
Այս դեպքը տխուր,
Գանգատելով զուր:
Ու հարցուց նորէն՝
Պարզ խելովն իրեն.
«Մա'յրիկ, հապա դուն՝
Երբ անցած առտուն
Աղբարիկս, Արան,
Դրբի լոգարան,
Ու թափելով ջուր՝
Լըւացի մահուր,
Անոր բան չեղաւ,
Քրնացաւ իսկ լաւ.
Բայց մանկիկըս, տես,
Քրքրուած ինչպէս,
Կըսուր մը բուրջ է,
Ալ բնա՛ւ աղուոր չէ:»
«Աղջընա՛կս աղուոր,»
Ըսաւ մայրն անոր,
«Աղբարիկ Արան՝
Մանկիկ մ'իբրեւան՝
Կ'ապրի, ունի կեանք
Եւ կ'ուզէ խընամբ.
Մինչ մանկիկը բու՝
Պուպրիկ մ'է շինծու.
Չունի կեանք, հոգի,
Ինչ պէտք խընամբի:
Աղջընա՛կս արթուն,
Պէտք է սորվիս դուն
Թէ աշխարհիս մեջ
Կան կեղծ բաներ խելն,
Ինչպէս նաեւ կան
Բաներ իրական:
Կեղծերն են խաբկանք,
Իրականն է թանկ.
Երբեք մի՛ մոռնար
Դասն այս օգտակար:

ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՂՋՆԱԿԸ

Ա.— ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Երբ ապահովեցաւ որ Գերմանները բաւական հեռացած են, մայր Մօրէն սեղմիրանին, տակէն պարանոցի թաշկինակ մը հանեց, ուրկէ երեք ոսկի հանելով ստիպեց Մարթան որ զանոնք առնէ, ըսելով.

«Ոսկին միշտ կրնայ ծառայութիւն մատուցանել և դուն մեզմէ աւելի անոր պէտք պիտի ունենաս: Մի՛ մերժեր, վիշտ կը պատճառես ինծի:»

Այն պահն, Մարթա, որուն կապոյտ խոշոր աչքերը արդէն լեցուած էին, սկսաւ արտասուել:

Իր յուզումը սակայն շուտով հանդարտեցաւ և շտկելով գլուխը ըսաւ.

«Չեմ ուզեր որ Գերմանները իմ վիշտովս զուարճանան:»

Յետոյ, գորովալից ողջազուրեց նախ մայր Մօրէնը և ապա Ժիւլիէնը:

Ժիւլիէն յստակ ձայնով մը ըսաւ.

«Մինչեւ Գրուա սը շըմեն քեզի պիտի ընկերանամ: Օրէնք է ընկերանալը անոնց հետ, որոնք Գերմաններու կողմէ կը տարուին: Քաղաքին մէջ այդպէս ըսին ինծի: Ուրեմն երկար ժամանակ քեզի հետ պիտի ըլլամ:»

Եւ Ժիւլիէն մեծ ճիգ մը ըրաւ չհեծկլտալու համար, այնպէս որ մայր Մօրէն գթաց անոր վրայ և ըսաւ աղնութէն.

«Աղէ՛կ, գնա՛ Մարթայի հետ մինչեւ Գրուա սը շըմեն, սակայն շուտ վերադարձիր:»

Տառը վայրկեան վերջ, Մարթա աչքերը սրբած և գլուխը բարձր, թողուց Սէնթ Պառալի սգարակին աւերակները, ուր այնքան լաւ տարիներ անցուցած էր: Իր վերարկուն հագած, բոլոր ուժովը կը մաքառէր ինքզինքը դսպել, իր զգացած վիշտը ցոյց չտալու համար: Մարթա իսկոյն միացաւ միւս գեռատի աղջիկներուն և կիներուն, որոնք գերման գլխուորններէ շրջապատուած էին, և որոնք իրեն պէս աքսոր և տաժանակիր աշխատանքի կ'երթային:

Միացած քանի մը ծնողներու որոնք այդ սոսկալի շարչարանքին կը հետեւէին մինչեւ արտօնեալ վայրը, խեղճ Ժիւլիէն, կաղալով հանդերձ, իր մաքին մէջ փնտռեց ամենէն աւելի մխիթարիչ և ամենէն աւելի քաղցր խօսքերը, որոնք կրնային մեղմել շարչարանքը այդ արի պզտիկ աղախինին, որուն աշխատութեանց և տքնութեանց այնքան յաճախ մասնակից եղած էր, ինչպէս և թէ՛ պտոյտներու և թէ՛ ուրախութեանց:

Բ.— ԱՔՍՈՐԻ ՃԱՄԲԱՆ

Լ... քաղաքէն անդին երկարող ճամբէն աքսորականներու խաւմբը, սուինաւոր և հրացանները

լեցուն գերման զինուորներէ շրջապատուած , դանդաղաքայլ կը յառաջանար :

Ժիւլիէն , իր յուզումը զսպելով , կաղնիկաղը կարելի եղածին չափ կը քալէր Մարթայի քովէն , որ լաւ երեւոյթ մը առնելու համար ինքդինքը կը բռնէր և նոյն իսկ երբեմն կը խնդար հանդարտեցնելու համար իր պզտիկ ընկերակիցը :



Տարագիրներու խումբը դանդաղաքայլ կը յառաջանար

Գերման սպան , որ անձամբ եկած էր Սէնթ-Պաուլի ագարակը , և որ միշտ իր ցուրտ և ճշգրտապահ երեւոյթը կը պահպանէր , քաղաքէն դուրս ելլելուն պէս համախմբեց գերիները : Հեղինակաւոր քանի մը խօսքերէ վերջ , անոնց յիշեցուց թէ՝ պատերազմի օրէնքներուն համաձայն , այժմ ի-

րենք գերման սպասարկութեան մէջ կը գտնուէին և թէ փախուտի առաջին փորձ մը իրենց մահուանը պատճառ պիտի ըլլար :

Այդ կարգի սպառնալիքներէ առանց ազդուելու Մարթա , շարունակեց ցած ձայնով խօսակցիլ Ժիւլիէնի հետ : Վստահեցուց Ժիւլիէնը թէ ինք իսկոյն նորէն իր մօտ պիտի գտնուէր :

«Մտի՛կ ըրէ , պնդեց Մարթա , պէտք է ինծի խոստանաս թէ երկու օր պիտի մնաս Թօնթէն օ Ուիգի մօտիկը :»

Ժիւլիէն այն ատեն աւելի մտաւորացած թեամբ անոր նայիլ սկսաւ :

Նոյնիսկ գերման սպային սպառնալիքէն ետքը , արդեօք Մարթա փախչելու մտադրութիւն ունէր : Փորձ-ձեռնարկներուն ամենէն յիմարը պիտի ըլլար այդ :

Արդարեւ , ոչ միայն հրացանները լեցուն զինուորներով շրջապատուած էին գերիները , այլ և ձիաւորներ կը շրջապայէին իրենց մօտիկը , փախչիլ փորձողները հետապնդելու համար :

Եւ սակայն Մարթա , Ժիւլիէնի շեշտակի ուղղելով իր խոշոր կապոյտ աչքերը , որոնք հազուադէպ կամք մը և լռին կորով մը կը մատնանշէին , երկրորդ անգամ ըլլալով ըսաւ :

«Զի մոռնաս երկու օրէն գալ Թօնթէն օ Ուիգ կոխի տե մուան :

Լա Թօնթէն օ Ուիգ , Սէնթ Պաուլ ագարակէն հազիւ քիւօմէթը մը հեռու կը գտնուէր : Մարթա և Ժիւլիէն իրենց դեռատի տարիքէն սկսեալ , հոն , թիթեռնիկներ և շերտիկներ հալածելով , ինչպէս

նաեւ կոտեմ և եղէգներ քաղելով կը զբօսնէին : Մօռէն ընտանիքը մօտը գտնուած Կոնյ տէմուան կոչուող հողամասը գնած էր : Այս հողամասը մնացորդն էր այն գետնայարկ ձեմալայրին , որ ժամանակին վանքի մը մօտը կը կազմէր և որ փակուած էր երկաթէ ծանր վանդակապատով մը : Արդ հողամասին մէկ ծայրը ագարակապանը ջանացած էր կազմակերպել սնկանոց մը և հող դիզած էր անգործածելի գործիքներ և հին տակառներ :

Ժիւլիէն և Մարթա , ատենօք կը հրճուէին երբ Լա Կոնյ տէմուան կ'երթային : Նախ անոր համար որ պտոյտը հաճոյալի էր և յետոյ այն գետնայարկը որ ծանր վանդակորմով մը կը գոցուէր դիմացկուն կղպանքներով , կարծես խորհրդաւոր բան մը ունէր :

Որովհետեւ աքսորականները ճամբուն մէկ դարձուածքին կը հասնէին , հրամանները օդը թրնդացուցին և յետոյ սկսան պոռչալուք և սպառնալիք տեղալ : Տողանցքը կանգ առաւ և զինուորները սեղմեցին իրենց շարքերը :

Այդ միջոցին տեսնուեցաւ հեծեալներու խումբ մը որ կը ձիարշաւէր դաշտին մէջէն : Ասոնք կը հալածէին դեռատի կին մը որ փախած էր : Դժբախտ կինը իսկոյն օձիքը ձեռք տուաւ և սուրի հակառակ կողմի հարուածներովը դարձեալ ետ բերուեցաւ : Խեղճ կինը կապեցին դաստակներէն հեծեալներէն մէկուն ձիուն , այսպէս շարունակելու համար խաչի չարչարանքը : Փախչիլ ու-

ղողին համար այս չարչարանքը դաս մը պիտի ըլլար :

Սակայն , գերմանացի սպան , փախչելու այս յանդուգն փորձին վրայ կատարած , ողջերթի ընկերացող բարեկամներուն և ազգականներուն պոռալով հրամայեց , կէս շրջան մը ընելէ վերջ , վերադառնալ իրենց տուները , եթէ չեն ուզեր որ անոնց հետ տեղափոխուին իրենք ալ :

Դժբաղդները համարձակութիւնը չունեցան նոյնիսկ վերջին մնաք բարովը տրտասանելու անոնց , որոնք իրենցմէ կը բաժնուէին թերեւս զիրար չտեսնելու պայմանաւ :

Ժիւլիէն եւս , միւսներուն պէս , հազիւ ժամանակ ունեցաւ սեղմելու Մարթայի ձեռքը , որ ժպտելով իրեն յանձնարարեց .

«Ամէն պարագայի մէջ յիշէ՛ երկու օրէն ֆօնքէն օռիզ պիտի գտնուիմ :

— Կ'աղաչեմ , ինչքեց ժիւլիէն ցած ձայնով , փախչելու ջանք մի՛ ըներ : Ես ա՛ր անաթէ ի՞նչ եղաւ փախչելուն հետեանքը :

Եւ իր ականարկները դարձուց դժբախտ կնկան կողմը , որ դաստակներէն լալաղին կը քաշկրուտուէր ձիուն ետեւէն :

«Վստահ եղիր , պոռաց Մարթա , և ձեռքով անոր միտս բարովի նշան ըրաւ առանց տկարութեան և առանց արցունքի :

Ժիւլիէն չկրցաւ զսպել իր հիացումը անոր քաջութեանը հանդէպ , և ճամբուն վրայ , մացառներու ետին քաշուած անշարժօրէն սկսաւ դիտել տողանցքը որ կը հեռանար : Երկար ա-

տեն դիտեց Մարթայի սղտիկ դը-
խանոցը : Ան գլուխը վեր և վրձ-
ռական քայլով մը կը քալէր վե-
րարկուն ձեռքին վրայ :



Ժիւլիէն սկսաւ դիտել տողանցը
որ կը հեռանար

Անմիջապէս յետոյ, Ժիւլիէն
զինուորներ միայն տեսաւ երէու-
շարքով, որոնք տարագիրները կը
չըջապատէին, ինչպէս նաեւ հեծ-
եալ խումբը, որ փոշի հանելով
հանդերձ կը հսկէր :

Այն ատեն Ժիւլիէն աղամայ
նստաւ ճամբուն վրայ և սկսաւ
լալ, հեծկլտանօք՝ երկար ժամա-
նակ :

Եւ երբ ան այլեւս հորիզոնին
վրայ բան մը չտեսաւ, կրկին
ձեռք առաւ Սէնթ Պաուլի ճամ-
բան և դնաց ողջագուրել մայր
Մօրէնը, որ լռակեաց կը մնար
աչքերը յառուն և բռունցքները
սեղմ : Ժիւլիէն ըսաւ անոր .

«Մի՛ մտատանջուիր, ես հօն-
քեմ օ ուիգ պիտի երթամ :»

«Ի՞նչ ընելու :»

«Խօսք տուի Մարթայի :»

Առանց հասկնալու մայր Մօ-
րէն ողջագուրեց զայն և ըսաւ
անոր .

«Գնա՛, սղտիկս և չատ մի՛
ջաւիր : Ամէն ինչ կ'անցնի, և ա-
մէն բան իր տեղը կը դառնէ :

(Շար.)

ՏԻՔ. ՏԻԳՐԱՆ ԽԱՉԵՐԵԱՆ

Մասնագէտ ներքին, ջղային

Եւ Տղայոց հիւանդութեանց

Գումգարու, Զիֆթէ Կէլին, դեղ. Ա. Ս.
Արսէնեան, թիւ 118 Եւ Կէտէկ Փաշա

Նէվիէ ճատտէ, թիւ 73

Կատարեալ լաջողութեամբ կը դարմանէ
ստամոքսի, աղիքներու, սրտի եւ թո-
քերու հիւանդութիւնները, երկարամեայ
փորձառութեամբ եւ խոր ուսումնասի-
րութեամբ հնարած է մասնաւոր դար-
մանում մը ջղային տկարութեան, լուս-
նոտութեան (սարա) եւ զլխացաւի, Հիմ-
նական դարմանում բոլոր ջղային հի-
ւանդութեանց. Կենսաբանական վերջին
տուիքներու համաձայն կ'արգիլէ ժա-
մանակէ առաջ ծերանալը եւ կը բուժէ
անոր հետեւանքները եղող անկարողու-
թիւնը, ընդհանուր տկարութիւնը եւ ին-
կածութիւնը. Առողջական վիճակի ման-
րագնին բնութեամբ ապագայ հաւա-
նական ծանր հիւանդութեանց առաջքը
կ'առնէ. Հիւանդագին եւ փափկակազմ
տղարներու առողջական վատթար վի-
վիճակը կը բարեփոխէ :

Անոնք որ առողջ միտք ունենալ կրփա-
փարին, առողջ մարմին ունենալու են,
հետեւաբար անպայման դիմելու են
վերոգրեալ հասցէին :

ԾՆՈՂՔՆԵՐՈՒ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ. — Ա-
մէն ուրբաթ կը հրատարակուի ԻԳՆԱՏ
ԱՂԱ երգիծաթերթը՝ խմբագրութեամբ
Ժանօթ երգիծաբան Տիար Եր. Չտեանի.
գին 5 դահեկան : Իսկ ամէն երկուշաբթի
առտունները՝ ՇԱԻԻՂ-ԻԳՆԱՏ ԱՂԱ միաց-
եալ. — Բշ. առտունները կը հրատարակ-
ուի նաեւ ԱՌԱԽՈՏ լրագիրը ամենավեր-
ջին լուրերով եւ ճոխ բովանդակութեամբ :
— Փնտոցէք նաեւ ամէն կողմ ՌՄՏԱՆ
գրական հանդէսը՝ գին 12 եւ ՀԱՅ ՍԿԱ-
ՌԻՏ Հ. Մ. Բ. Միութեան կիսամսեայ
հանդէսը՝ գին 10 դր2.:

ԽՈՐԱԳԷՏ ՀՆԴԻԿԸ



Անգամ մը Ամերիկացի Հնդիկ մը որսի կ'երթայ և ճագար մը կը սպաննէ : Ճագարին մորթը կը հանէ , կ'աղէ ու պատէն կը կախէ որ չորնայ : Վերջը դուրս կ'ելլէ որ հաց գնէ , բայց երբ իր տնակը կը դառնայ , կը նայի որ իր որսի միտը գողցեր են : Չորս կողմը լաւ մը կը քննէ և շուտով դուրս կը վազէ , որպէսզի գողին քտելէն հասնի ու քռնէ : Անտառէ մը անցնելու ատեն քանի մը մարդիկ կը տեսնէ և կը հարցնէ .

— Բարեկամներ , արդեօք ձեր ճամբուն վրայ կարճ , սպիտակ ծեր մը տեսա՞ք : Պզտիկ հրացան մը ունէր և երկայն պոչով մանր շուն մը :

— Հա՛ , տեսանք , ճիշդ ըսածիդ պէս է :

— Լաւ , այդ մարդն իմ ճագարս գողցաւ :

— Տեսա՞ր զինքը գողնալու պահուն :

— Ո՛չ , չտեսայ :

— Ուրեմն ինչպէ՞ս գիտես որ ծեր է , կարճ է , հրացան և մանր շուն մը ունի :

— Որովհետեւ չորս կողմս դիտեցի ու այլեւայլ նշաններէ հասկեցայ : Պատմեմ ձեզի : Այդ գողը պզտիկ մարդ մըն է , քանի որ գետինը քարեր զիզեր էր և վրան ելլելով կախուած բարձր տեղէն ճագարը առեր էր . ծեր մարդ մըն է , որովհետեւ գետինը նայելով չոր խոտերուն վրայ փոքր քայլափոխներ տեսայ . ներմակ մարդ մըն է , վասնզի ձերմակ մարդիկ

միայն քաշելու ատեն իրենց ոտքը դէպի դուրս կը դարձնեն . իր հրացանը կարճ է , անոր համար որ ծառի կռթնցուցած իր հրացանին բերանը ծառին կեղեւին վրայ նշան ձգեր էր . իր շունը մանր է , ինչու որ պզտիկ հետքեր ձգեր էր . իսկ պոչն ալ երկար է , որովհետեւ աւազին վրայ հետքեր թողած էր :

Ա Ռ Ա Կ Ա Ն Ի

ԱՌԱՎ-ՔԱՌԵԱԿՆԵՐ



Երկու խօսք
«Պիւկիւ» մըն է .
Անուշ խօսք
Սիրս կը շինէ :



Ես աղա,
Դուն աղա
Ջաղացք
Ո՞վ աղայ :

ԱՌԱՎԱԽՍՍ

Ա Ռ Ա Յ Ն Ե Ր

Անձբեւոտ օրը հաւուճ ջուլ տուող շատ կ'ըլլայ : — Այն ջուրէն վախցիր , որ ոչ կը դըղըչէ , ոչ կը խոխոջէ : Ահր ծանր է քան մահը :

ԿԱՐԵԻՈՐ . — Ի դիւրութիւն ուսանողներու , խմբագրութիւնս հարկ դատեց հանելուկները հրատարակել 15 օրը անգամ մը :

Ա Կ Ն Ա Բ Ո Յ Ժ

ՏԲԹ. Մ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Հասցէ՝ Պահճէ Դարու , Իքի Բարուլու դեղարանը , կէսօրէ վերջ :

ELEVENTH AND TWELVETH ENGLISH LESSONS

VERBS

To have (ունենալ) բային խոնարհումը

I have — այ հէ՛լ = ունի՛մ
 You » — ետւ » = ունիս
 He has — հի՛ղ հէ՛ղ = ունի
 We have — ուի հէ՛լ = ունինք
 You » — ետւ » = ունիք
 They » — թհէ՛յ » = ունին

I had — այ հէ՛տ = ունէի
 You » — ետւ » = ունէիր
 He » — հի » = ունէր
 We » — ուի » = ունէինք
 You » — ետւ » = ունէիք
 They » — թհէ՛յ » = ունէին

I have had = ունեցա՛ծ եմ
 You » » = ունեցա՛ծ ես
 He has » = ունեցա՛ծ է
 We have » = ունեցա՛ծ ենք
 You » » = ունեցա՛ծ էք
 They » » = ունեցա՛ծ են

I shall have = պիտի ունենա՛մ
 You will » = պիտի ունենաս
 He » » = պիտի ունենայ
 We shall » = պիտի ունենանք
 You will » = պիտի ունենաք
 They » » = պիտի ունենան

EXERCISE

I have a pretty book. Have they a brother? Yes, Sir, they have two brothers. We had some paper and ink, and they had five books. You will have this and we shall have that. They will have ours, but you will have theirs. Shall I have what your sister has? You will have those I have.

Hearts, like doors, can open wit hease
 To very, very little keys;
 And don't forget that two are these;
 «I thank you Sir», and «If you please.»

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳԱՒԱՌ**

Տարեկան (48 թիւ) 120 Դրամ.

Վեցամսեայ (24 ») 60 »

ԱՏԱՍԱՀՄԱՆ Տարեկան (48 ») 20 Դրամ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ. — Առաւօս նորահայտներու պատկերազարդ շարա-
թաթերթին հասցէն է՝ Պապր Ս. Ի. Դրան ճիշդ դիմացը թիւ 43:

ՊԻԻՔԱՍԷՔԹԻՆ

BUCCASEPTINE

Այս էլիքսիրը կը յանձնարարուի իրրեւ
ազդու հականեխիչ եւ դարման բերնի
բորբոքումներու, ակռայի ցաւերու, լին-
տերու հիւանդութեանց եւ բերնի գար-
շահոտութեան, ծայնի մարելուն, ամէն
տեսակ հարբուխներու, չոր հազերու,
ակռաները մարելու եւ ձերմկցներու:

ԲՐԷՍ ՍԱՐՔՕՓԹԻՍԻՏ

CREME SARCOPTICIDE

Միակ դարման բորոտութեան, որ
երեք օրէն կաւարելապէս կը բուժէ
հին եւ նոր բորոտութիւնը:

Այս երկու դեղերուն, որոնց հայթայթիչը
եւ պատրաստողն է՝ Վահան Պէրպէրեան,
կեդրոնատեղին կը գտնուի Պոլիս, Նուրը
Փոմանիւ, Ճատաւսի, Օսմ. Կեդր. Դեղա-
րանը, թիւ 48:

ՀՍ.ՅԿ ՄԱՀՅԱԶԱՆԵԱՆ

ՄԱՔՍԱՅԻՆ ՅԱՆԶՆԱԿԱՏԱՐ

Ներածում եւ արտածում

Կը գնէ նաեւ «սթօր» ապրանքներ
Մահմուտ Փաշա, Բամանթօ խան, թիւ 23

ՏԻՐ. ԱՐԹԻՆ ՊԷՅ ՏԵՎԼԵԹԵԱՆ

Նախկին վիրաբուժապետ Հայտար Փա-
շայի զին. հիւանդանոցին

Գիտական ամենավերջին մէթոտով, դե-
ղերով եւ ներարկումներով քիչ ժամա-
նակի մէջ առանց ցաւի կը բուժէ վէր-
քեր եւ ակտեր: Կը գտնուի ամէն օր
բացի Կիրակիէ, Գարաբէօյ, Աղլ. Փօս-
թին դիմաց Հին Վոյվօտայ թիւ 3

ՏԻՐ. ՆԵՐՍԷՍ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

ՄԱՍՆԱԴԷՏ՝ ականջի, քիթի եւ կոկորդի
հիւանդութեանց

Պահճէ Գարու, Համիտի, Թիւրպէսիի
դէմ: Արիւ Իւթիւժեան դեղարանի վեր-
նայարկը:

ՏԻՐ. Ա. ՍԵՍԷՐՃԵԱՆ

Գումգարու, Պատրիարքարանի կարգը
Հիւանդ կ'ընդունի նաեւ ամէն օր ժամը
3էն 5, Բանթարճըլար, Էվրօքիտի դե-
ղարանը:

Տղոց մորթալին հիւանդութեանց
դարմանատուն

ՏԻՐ. Թ. Յ. ՄՁՐԿԵԱՆ եւ

ՏԻՐ. Թ. Գ. ԿՈՍՏԱՆԴ

Մեծ շուկայ, Գալրագճըլար, Պայագիտի
դրան դէմ, թիւ 18:

ԿՕՇԻԿ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ

Պոլիս, Բարմար գարու, Մաքաճըլար,
թիւ 33 վաճառատան մէջ նոր ժամա-
նած ամերիկեան եւ անգլիական կօշիկ-
ներ սկսան վաճառուիլ, արանց 400,
կանանց 350 եւ տղայոց 300 դրուշէն:
Կը շինուին նաեւ չափու վրայ կօշիկներ,
տոկուն եւ ձեւաւոր:

Բոլոր կարծր առարկաները մար-
բելու եւ փայլեցնելու համար գործածէ

ՊԷՊԻՔՍ ԳԼԻՆՍԱՐ

հանրածանօթ ամերիկեան փողին

Տպագր. «Առաւօս» Հանդեսի